# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1-ին փողոց թիվ 26, հեռ. (098) 42-88-38, (077) 06-32-01, kaputangyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիս 2017 թվականի N 18

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՕՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ԶԵՓՅՈՒՌ ՀԱՅԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀԱՄԻԿ ՁԱՅԻՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՁԱՅԻՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912–Ն որոշմամբ հաստատված կարգի 2–րդ բաժնի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 22.1-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով. ***որոշում եմ՝***

1. Կապուտան համայնքի 1-ին փողոց թիվ 5 հասցեում գտնվող քաղաքացիներ Քրիստինե Օնիկի Մանուկյանի, Զեփյուռ Հայկի Մանուկյանի, Համիկ Ձայինի Մանուկյանի և Հայկ Ձայինի Մանուկյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-036-020-007 կադաստրային ծածկագրի հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված՝ ցախանոց 76,17քմ, սանհանգույց 11,26քմ, բաղ 27,8քմ մակերեսով շինությունները և 155,24քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասը համարել օրինական:

2. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. 2017թվականի մարտի 27-ի թիվ 16 որոշումը ուժը կորցրած ճանաչել:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 19

## ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 02 մայիսի 2017թվականի N 86-Ա որոշումը, որոշում եմ.

1.<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների կատարման նպատակով, Կապուտանի համայնքապետարանում ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1) Սերոբ Միքայելյան- համայնքի ղեկավար- հանձնաժողովի նախագահ

2)Արգամ Մուրադյան- աշխատակազմի քարտուղար-անդամներ

3)Նշան Սաֆարյան-համայնքի ղեկավարի տեղակալ

4)Հերմինե Մանուկյան-առաջատար մասնագետ

5)Դանիել Ենգիբարյան-1-ին կարգի մասնագետ

2.Հանձնաժողովին՝ աշխատանքներ իրականացնելիս իրավախախտ անձանց ենթարկել վարչական պատասխանատվությանօրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2017թ. 05 18
գ.Կապուտան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք 1-ին փողոց թիվ 26հեռ 077063201 kaputan.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**23.Մայիս.2017թ. N 20**

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 32, 33, 34 և 35-րդ կետերի պահանջներով՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած քաղաքացու դիմումը ինքնակամ կառույցը և զբաղեցրած հողամասը գնելու վերաբերյալ՝

***Որոշում եմ***

1. Կապուտան համայնքի վարչական տարածքում գտնվող /Կապուտան համայնքի ղեկավարի 2017թ. մարտի 27-ի թիվ 17 որոշմամբ օրինականացված՝ կադաստրային ծածկագիր 07-036-0029-0033/-0,06314հա բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 190,45քմ շինությունը ուղղակի վաճառքի եղանակով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Կապուտան գյուղի բնակիչ Մկրտիչ Մկրտչյանին:
2. Համայնքի սեփականության հողամասը և շինությունը օտարել սեփականության իրավունքով հետևյալ արժեքներով՝

   ա/ մանկապարտեզ՝ 178,02 քմ x 6210դր.=1105504 ՀՀ դրամ,

   բ/ պարիսպ՝ 12,43քմ x 1380դր.=17154 ՀՀ դրամ,

   Ընդամենը շինությունների արժեք՝ 1122658 ՀՀ դրամ,

   գ/ կառույցի տակի հողամաս՝ 190,45քմ x 2=380,9քմ x 342դր.=130268 ՀՀ դրամ,

   դ/ մնացած հողամաս՝ 250,5քմ x 1026դր./կադաստրային արժեքի եռապատիկ/=257013 ՀՀ դրամ,

   Ընդամենը՝ 0,06314 հա հողամասի արժեքը 387281 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1-ին փողոց թիվ 26, հեռ. (098) 42-88-38, (077) 06-32-01, kaputangyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիս 2017 թվականի N 21

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԴԱՎԻԹ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԵՐԱՆՈՒՀԻ ԴԱՎԻԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԼԵՌՆԻԿ ԴԱՎԻԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ , ԳԱՌՆԻԿ ԴԱՎԻԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԲԱՎԱԿԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ , 22.1 կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի և 2003թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով. ***որոշում եմ՝***

1.Կապուտան համայնքի 6-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող քաղաքացիներ Դավիթ Արարատի Հարությունյանի, Երանուհի Դավիթի Հարությունյանի, Լեռնիկ Դավիթի Հարությունյանի , Գառնիկ Դավիթի Հարությունյանի և Բավական Մնացականի Հարությունյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-036-030-005 կադաստրային ծածկագրի հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը 17,63քմ , ծածկարան 3,83քմ, պարիսպը 5,5քմ մակերեսով, 2,24քմ մակերեսով զուգարանը և տնամերձ հողամասին կից մինչև 20% ավել օգտագործվող 29,2 քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացիներ Դավիթ Արարատի Հարությունյանին, Երանուհի Դավիթի Հարությունյանին, Լեռնիկ Դավիթի Հարությունյանին , Գառնիկ Դավիթի Հարությունյանին և Բավական Մնացականի Հարությունյանին ինքնակամ կառուցված շինությունների համար

համայնքի բյուջեի N 900105217211 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ ծածկարանի և զուգարանի մեկ քառակուսի մետրի՝ համար 414 (չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն, որ 17.63քմ մակերեսով բնակելի տունը և 5,5քմ պարիսպը ինքնակամ կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը, որի օրինականացման համար վճար չի գանձվում: Ծածկարանի և զուգարանի ընդհանուր մակերեսը 6,23քմ է, որոնց օրինականացման արժեքը կազմում է 2580 (երկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներովև չի առաջացնումհարկադիր սերվիտուտպահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1-ին փողոց թիվ 26, հեռ. (098) 42-88-38, (077) 06-32-01. kaputangyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 մայիս 2017 թվականի N 22**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 22.1-րդ կետերի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով. ***որոշում եմ՝***

1. Կապուտան համայնքի 15-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող քաղաքացի Վահրամ Կարապետի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-036-018-004 կադաստրային ծածկագրի հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված 236,2քմ մակերեսով բնակելի տունը համարել օրինական:

2. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2015թվականի հուլիսի 3-ի N 11 որոշումը:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 23

## ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.03.2017Թ. N 10-13 ԵՎ 06.03.2017Թ. N 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 5-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ,***

1. Կապուտան համայնքի ղեկավարի 2017թվականի մարտի 2-ի <<Առուվաճառքի պայմանագիր կնքելու մասին>> N 10-13 որոշումների նախաբանները շարադրել նոր խմբագրությամբ ՝ հետևյալ բովանդակությամբ.

1.1) Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով:

2. Կապուտան համայնքի ղեկավարի 2017թվականի մարտի 6-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքում 2017 թվականի հնարավոր ջրհեղեղների,սելավների,քարաթափումների և սողանքների կանխարգելման,հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների մասին>> N 15-Ա որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ ՝ հետևյալ բովանդակությամբ.

2.1) Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի պահանջներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 __ թ. ____________

գ.Կապուտան